

Լավագույն գին

Քաջ Նազարը ճանճ սպանող ռոբոտների արտադրություն է կազմակերպել և պատրաստվում է վաճառքի հանել այդ ռոբոտները: Նա տեղեկացել է, որ գնի վերջում որքան շատ 9-ներ լինեն, այնքան շատ գնորդներ կգտնվեն: Մյուս կողմից կա ինչ-որ A գին, որից ցածր ձեռնտու չէ վաճառք իրականացնել, և կա B գին, որից չարժեն անցնել, այլապես ոչ մի գնորդ չի գտնվի:

Պահանջվում է գրել ծրագիր ռոբոտի համար լավագույն գին գտնի, այսինքն այնպիսի գին, որը [A,B] սահմաններում լինի և որը վերջանա առավելագույն թվով 9-երով: Մի քանի հնարավոր պատասխանների դեպքում պետք է ընտրել մեծագույնը:

Մուտքը

Տրված են A և B ամբողջ թվերը ($1 \leq A \leq B \leq 1000000$):

Ելքը

Պետք է արտածել մի թիվ՝ լավագույն գինը:

Օրինակներ

Մուտքը.
10 1000

Ելքը.
999

Մուտքը.
10 15
Ելքը.
15